ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/58459-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-367-14.11.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1839 - Ա որոշումը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-367-14.11.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածով փոփոխության է ենթարկվում «գովազդ» հասկացությունը, որն այլևս չի նախատեսում գովազդի բուն նպատակը՝ հետաքրքրության ձևավորումը կամ պահպանումը տվյալ օբյեկտի նկատմամբ: Այնինչ գովազդը պետք է նպատակ հետապնդի հետաքրքրություն ձևավորելու կամ պահպանելու տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ: Այսինքն՝ տեղեկությունը պետք է նպատակաուղղված լինի գովազդի օբյեկտը սպառողի ուշադրությանը ներկայացնելուն, վերջինիս համոզելուն, հետևաբար գովազդի կարևոր առանձնահատկությունը օբյեկտի նկատմամբ հետաքրքրվածության խթանումն է, նրա նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումն ու այդպիսի վերաբերմունքի պահպանումը (ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թ. նոյեմբերի 28-ի թիվ ՎԴ/0429/05/13 գործ):

Ուստի առաջարկում ենք «գովազդ» հասկացության մեջ ներառել նաև դրա նպատակը: Անհրաժեշտ է նաև նշել, որ նախագծի հիմնավորմամբ չի բացատրվում «գովազդ» հասկացության փոփոխման հանգամանքը:

2. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ և տրվում է արտաքին գովազդի հասկացությունը, որը, սակայն, բավականաչափ հստակ չէ և հետագայում կարող է տարընկալումների տեղիք տալ: Հստակ չէ նաև «դրսից տեսանելի» եզրույթը: Միաժամանակ նախագծի 2-րդ հոդվածով շենքերի և շինությունների ներսում տեղեկատվության տարածումն արտաքին գովազդ որակելը և վերջինիս համար տեղական տուրք սահմանելը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներով սահմանված գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքներին:

Անհրաժեշտ է նաև արտաքին գովազդը տարանջատել գործունեության մասին առաջնային տեղեկություններից: Եթե տնտեսավարողը փակցնում է տեղեկություններ իր ապրանքային նշանի, վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների մասին (օրինակ՝ մրգի, բանջարեղենի իրացմամբ զբաղվող առևտրի օբյեկտի վրա «Միրգ, բանջարեղեն» գրառումը), նման տեղեկությունները գովազդ չպետք է համարվեն:

Այս առումով գտնում ենք, որ արտաքին գովազդի հասկացությունը նպատակահարմար է նախատեսել օրենքի 2-րդ՝ օրենքում գործածվող հիմնական հասկացությունների հոդվածում և

կրկնություններից խուսափելու համար համապատասխանաբար հանել նաև օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը:

Իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից առաջարկում ենք արտաքին գովազդի հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«արտաքին գովազդ՝ պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցներով հանրային տեսանելի վայրերում տեղաբաշխվող գովազդ»:

2. Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր մասերով, մասնավորապես՝ լրացվող 1-ին մասի համաձայն՝ Երևան քաղաքում արգելվում է տեղադրել կամ փակցնել ցանկացած տեսակի և չափսի արտաքին գովազդ՝ առանց Երևանի քաղաքապետարանի թույլտվության:

Այս առումով հարկ է անդրադառնալ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին, որի համաձայն՝ «3. Երևան քաղաքի քաղաքային նշանակություն ունեցող փողոցներում, այգիներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալիս է Երևանի քաղաքապետը»:

Վերոգրյալ կարգավորումից պարզ է դառնում, որ օրենքով արդեն իսկ կարգավորված են Երևան քաղաքի քաղաքային նշանակություն ունեցող փողոցներում, այգիներում արտաքին գովազդ տեղադրելու սահմանափակումների հետ կապված հարաբերությունները և նախագծով լրացվող կարգավորման արդյունքում հակասություն է առաջանալու գործող կարգավորման հետ: Այս առումով առաջարկում ենք օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը հանել, քանի որ նախագծով առաջարկվող կարգավորմամբ նախատեսվում է սահմանափակում՝ Երևան քաղաքում ցանկացած տեսակի և չափսի արտաքին գովազդ տեղադրելու կամ փակցնելու դեպքում, այսինքն՝ նախագծով նախատեսվող սահմանափակումները տարածվելու են Երևան քաղաքի ամբողջ տարածքի վրա:

3. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Երևան քաղաքում արգելվում է տեղադրել կամ փակցնել ցանկացած տեսակի և չափսի արտաքին գովազդ՝ առանց քաղաքապետարանի թույլտվության:

Միևնույն ժամանակ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, արգելել ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված հայտարարությունների տեղադրումը Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների, էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում՝ բացառությամբ բազմաբնակարան բնակելի շենքերում և Երևան քաղաքի վարչական սահմաններում այդ նպատակով տեղադրված հայտարարությունների համար նախատեսված վահանակների:

Այս առումով հարկ է նշել, որ հիշյալ երկու կարգավորումների միաժամանակյա առկայության պարագայում ստացվում է, որ մի դեպքում Երևան քաղաքում քաղաքապետարանի թույլտվությամբ կարող է տեղադրվել ցանկացած տեսակի և չափսի արտաքին գովազդ, իսկ հաջորդ

կարգավորմամբ առհասարակ արգելվում է գովազդի տեղադրումը Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների, էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում՝ բացառությամբ բազմաբնակարան բնակելի շենքերում և Երևան քաղաքի վարչական սահմաններում այդ նպատակով տեղադրված հայտարարությունների համար նախատեսված վահանակների:

Երևան քաղաքում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված հայտարարությունների տեղադրումը, հայտնում ենք, որ օրինակ՝ «դեղատուն» ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված հայտարարությունը կարգավորվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և նախագծի ներկայիս տեսքով խմբագրությունը հակասում է գործող օրենսդրությանը:

Տվյալ դեպքում իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է հստակեցնել, թե որ տարածքներում և վայրերում և որ տեսակի գովազդի տեղադրման թույլտվությունն է տրամադրվելու քաղաքապետարանի կողմից: Վերոգրյալի համատեքստում պարզ չէ նաև, թե արդյոք արտաքին գովազդի արգելման ընդհանուր կարգավորումը վերաբերելու է Երևան քաղաքին, թե տարածվելու է նաև դրա սահմաններից դուրս:

Անդրադառնալով նախագծի 2-րդ մասով նախատեսված պահանջների խախտման համար նախատեսվող պատասխանատվությանը՝ հարկ ենք համարում նշել, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված հայտարարությունները տեղադրելու փաստի առկայության պարագայում գործնականում խնդրահարույց է լինելու իրավախախտման սուբյեկտին բացահայտելու հարցը՝ մասնավորապես նկատի ունենալով, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված հայտարարությունները կարող են տեղադրվել ոչ միայն վերջիններիս, այլ նաև ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ չկապված և գովազդատու չհանդիսացող այլ անձանց կողմից:

4. Նախագծի 4-րդ հոդվածով արգելվում է տրանսպորտային, ինչպես նաև ցանկացած այլ շարժական միջոցների ձևով էլեկտրոնային էկրաններով ցանկացած գովազդի ցուցադրումը կամ տեղադրումը: Առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածը վերախմբագրել, քանի որ հոդվածի առկա խմբագրությունից թվում է, որ արգելվում է էլեկտրոնային էկրանների միջոցով ցանկացած գովազդի ցուցադրումը կամ տեղադրումը նաև տրանսպորտային կամ այլ շարժական միջոցների ներսում: Բացի այդ՝ վերոնշյալ դրույթը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի դրույթներով հստակ սահմանված են գովազդի արգելման դեպքերը:

5. Միաժամանակ հարկ է նաև նշել, որ նախագծում առկա են օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտումներ: Այսպես՝

1) նախագծի 1-ին հոդվածի «1-ին պարբերությունը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին մասի 1-ին պարբերությունը» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները.

2) նախագծի 2-րդ հոդվածում «Գովազդի մասին» 1996 թվականի հունիսի 4-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք)» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Օրենք» բառով՝ նկատի ունենալով նախագծի 1-ին հոդվածի դրույթները.

3) նախագծի 2-րդ հոդվածում «1-ին պարբերությունը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին մասը» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները.

4) նախագծի 3-րդ հոդվածում «պարբերություններով» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասերով» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները.

5) նախագծի 4-րդ հոդվածում «պարբերությունով» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասով» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները.

6) նախագծի 5-րդ հոդվածում «հոդվածի 1.1 կետում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հոդվածի 1.1-ին մասում» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները.

7) նախագծի 1-ին հոդվածում «հունիսի 4-ի» բառերը փոխարինել «ապրիլի 30-ի» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:

Պ-367-14.11.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գովազդի մասին» 1996 թվականի հունիսի 4-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ:

«գովազդ՝ տեղեկատվություն, որը տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ հանրայնացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գաղափարները, նախաձեռնությունները, ծառայությունները, գործունեության տեսակները, ապրանքները, ապրանքային նշանները եւ ֆիրմային անվանումները»:

Հոդված 2. «Գովազդի մասին» 1996 թվականի հունիսի 4-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ:

«արտաքին գովազդ՝ տեխնիկական տարբեր տեսակի միջոցների ձեւով ցանկացած գովազդի տարածում՝ այդ թվում պատկերների օգտագործմամբ, հանրային տեսանելի վայրերում, շենքերի եւ շինությունների վրա, ինչպես նաեւ դրանց ներսում, սակայն դրսից տեսանելի»:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածը, «Քաղաքապետը» բառից հետո, լրացնել նոր պարբերություններով՝ հետեւյալ բովանդակությամբ:

«Երեւան քաղաքում արգելվում է տեղադրել կամ փակցնել ցանկացած տեսակի եւ չափսի արտաքին գովազդ առանց Երեւանի քաղաքապետարանի թույլտվության»

«Արգելվում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված հայտարարությունների տեղադրումը Երեւան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների, էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաեւ ցանկացած այլ հանրային վայրերում՝ բացառությամբ բազմաբնակարան բնակելի շենքերում եւ Երեւան քաղաքի վարչական սահմաններում այդ նպատակով տեղադրված հայտարարությունների համար նախատեսված վահանակների»:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությունով՝ հետեւյալ բովանդակությամբ

«Արգելվում է տրանսպորտային, ինչպես նաեւ ցանկացած այլ շարժական միջոցների ձեւով էլեկտրոնային էկրանների միջոցով ցանկացած գովազդի ցուցադրումը կամ տեղադրումը»:

Հոդված 5. Օրենքի 26-րդ հոդվածի 1.1. կետում «առանց արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու» բառերից հետո լրացնել « եւ սույն օրենքի 11-րդ եւ 12-րդ հոդվածներով նախատեսված պահանջները խախտելու» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից 1 ամիս հետո:

Հիմնավորում

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրենքում փոփոխությունները նախատեսում են կանոնակարգել Երեւանում, իսկ հետագայում նաեւ հանրապետությունում, արտաքին գովազդի ոլորտը: «Գովազդի Մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության փոփոխությունը թույլ է տալիս ընդլայնել արտաքին գովազդ հասկացությունը եւ մի շարք գովազդի տեսակներ եւս ներառել արտաքին գովազդ հասկացության մեջ: Այս պահին գովազդատուները հնարավորություն ունեն իրենց գովազդները փակցնել ցանկացած տեղ, բացառությամբ Գովազդի մասին օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված վայրերից, այն է՝ թանգարաններում, պատմական եւ ճարտարապետական հուշարձանների ներսում, ինչպես նաեւ պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմինների շենքերում եւ նրանց տարածքում:

Արտաքին գովազդի սահմանման փոփոխությունից հետո արտաքին գովազդ կիամարվի տեխնիկական տարբեր տեսակի միջոցների ձեւով ցանկացած գովազդի տարածում՝ այդ թվում պատկերների օգտագործմամբ, հանրային տեսանելի վայրերում, շենքերի եւ շինությունների վրա, ինչպես նաեւ դրանց ներսում, սակայն դրսից տեսանելի: Այս փոփոխությունը վերաբերելու է նաեւ Երեւան քաղաքի եւ ՀՀ այլ քաղաքաների ու համայնքների գլխավոր կամ երկրորդական փողոցների ամենատարբեր անկյուններում, կանգառներում, շենքերի պատերին, հենասյուներին ու մի շարք այլ վայրերում փակցված տարբեր չափսի ու ձեւի գովազդներին, որոնք էականորեն փչացնում են քաղաքի արտաքին տեսքը:

Օրենքի փոփոխությունից հետո նմանատիպ արտաքին գովազդներ կարող են տեղադրվել բացառապես հայտարարությունների համար նախատեսված վահանակների վրա, իսկ վերը նշված օրենքի խախտման պատիժը սահմանված է «Գովազդի Մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1.1 եւ 2-րդ մասերում:

Օրենքով նախատեսվում է նաեւ արգելվում է տրանսպորտային, ինչպես նաեւ ցանկացած այլ շարժական միջոցների ձեւով էլեկտրոնային էկրանների միջոցով ցանկացած գովազդի ցուցադրումը կամ տեղադրումը:

Օրենքում փոփոխությունը հետապնդում է երկու նպատակ. կանոնակարգել արտաքին գովազդի շուկան եւ արտաքին գովազդ հասկացությունը, ինչպես նաեւ բարելավել Երեւան քաղաքի արտաքին տեսքը: